№ 12 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 31 1891 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 31 № 12

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

## ՆԵՐԿԱՅ 1891 ԹՒԱԿԱՆԻՆ

## „ՄՇԱԿ“

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն ձևով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի.

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը).

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով բառին վճարվում է 2 կոպէկ.

«Մշակի» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպագրվում են միմիայն՝ լրագիրների յայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում։ Մահացուցակի տպագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խոնարհաբար խնդրում է այն անձանց, որոնք հետաքրքրվում են արհեստագիտական կրթութեան զրութեամբ և առաջադիմութեամբ, պատւել իրանց ներկայութեամբ դըպրոցի տարեկան ակտը, որը տեղի կունենայ ներկայ տարվայ փետրվարի 3-ին, կիրակի օր, ժամը 1-ին, կէսօրից յետոյ։

1—2

---

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զինաթափի խնդիրը Եւրոպայում. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ախալցխայից. Նամակ Նոր-Բայազէտից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղուածքներ Կ. Պօլսի լրագիրներից. Պատրիարքի վերադարձը և շնորհաւորութիւնները. Նամակ Գերմանիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

---

## ԶԻՆԱԹԱՓԻ ԽՆԴԻՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

—

Ուշադրութեան արժանի է, որ այն մարդիկ, որոնք ամենից շատ էին մղում արիւնահեղ պատերազմներ, որոնք յայտնի էին պատմութեան մէջ իրանց պատերազմական ոգով Պրուսիայի Ֆրիդրիխ II, Նապօլէօն I և Նապօլէօն III, ամենից շատ էին խօսում և երազում ընդհանուր խաղաղութեան և զինաթափի մասին։

„Եթէ մասնաւոր մարդիկ, ասում էր Ֆրիդրիխ II, իրանց վէճերը վճռելու համար դիմում են դատարանին, ինչի՞ թագաւորները նոյն դէպքերում չը պէտք է դիմէին պետութիւնների միջնորդ դատարանին։ Այդ միակ միջոցն է, որը կարող է լուծել Եւրոպայում սխալ կերպով հասկացած պատասխանութեան հարցը, որը հազարներով զոհեր է պահանջում այն մարդկանցից, որոնք կարող էին ուրիշ տեսակ ծառայութիւններ մատուցանել հայրենիքին“։

Ս. Հեղինէի կղզում գրած իր յիշատակարանում Նապօլէօն I ասում է, որ ինքն ձգտում էր միացնել պատերազմի միջոցով բոլոր եւրոպական երկիրները, որպէս զի վերջը մշտական խաղաղութիւն հաստատէ Եւրոպայում։

Ֆրանսիական օրէնսդրական ժողովի բացմանը, 1864 թւին, Նապօլէօն III ասում էր. „Կեանքի նոր պայմանները պահանջում են ընդհանուր համաձայնութեամբ հաստատված խաղաղութիւն“։ Ապա նա առաջարկում էր հաստատել եւրոպական միջազգային կոնգրես, որը վերջ դնելով պատերազմներին, կը հանդիսանայ որպէս բարձրագոյն միջազգային դատարան։ „Մի՞թէ նախապաշարմունքները և մեզ բաժան-բաժան անող երկպառակութիւնները, աւելացնում էր նա, չը ձանձրացրին մեզ. մի՞թէ այդ մշտական երկպառակութիւնները անընդհատաբար կը հանդիսանան որպէս քաղաքակրթութեան և առաջադիմութեան խոչընդոտներ, մի՞թէ մեզ վիճակված է միշտ լսել գանգատներ անչափ զինաւորվելու մասին և մի՞թէ, վերջապէս, մարդկութեան ամենաթանգագին աղբիւրները պէտք է միշտ ծախսվէն ունայն փառասիրութեան և ահագին զօրքերը պահպանելու վրա“.

Նորերումս երիտասարդ դիպլօմատ Գեբինգ, Հռոմի անգլիական դեսպանութեան քարտուղարը, ներկայացրեց մարկիզ Սօլսբըրին մի յիշատակագիր եօթ եւրոպական մեծ պետութիւնների մուտքի և ծախսերի մասին 1882—1888 թ. ընթացքում։

Այդ յիշատակագրի մէջ ասվում է որ 1882 թւին ազգաբնակութեան ընդհանուր թիւը եւրոպական եօթ պետութիւնների մէջ (Աւստրո-Ունգարիա, Անգլիա, Գերմանիա, Սպանիա, Իտալիա, Ռուսիա) և Ֆրանսիա) հասնում էր 302 միլիօն հոգու։ Նոյն ժամանակ այդ եօթ պետութիւնների մէջ վերցվող ուղղակի և անուղղակի հարկերի գումարը հաւասար էր 13 միլիարդ և 788 միլիօն ֆրանկի։ Վեց տարուց յետոյ, այսինքն 1888 թւին, նոյն պետութիւնների մէջ ազգաբնակութեան ընդհանուր թիւը հասաւ արդէն 319 միլիօն հոգու, և հարկերի գումարն էլ բարձրացաւ մինչև 15 միլիարդ ֆրանկ։

Եօթ պետութիւնների ընդհանուր պարտքը 1882 թւին հաւասար էր 83 միլիարդ ֆրանկի, իսկ 1888 թւին՝ նոյն պետութիւնների բիւջէտի դէֆիցիտը աւելացաւ դարձեալ 530,756,930 ֆրանկ գումարով։

Հեղինակը կարծում է, որ պետութիւնների հետզհետէ աւելացող ծախսերի պատճառը մշտական զօրքը և նաւատորմը պահպանելու վրա անվող ծախսերն են։

Այդ ծախսերը 1882 թւից մինչև 1887 թիւը աւելացան հետևեալ չափով.

Աւստրիան ծախսում էր 1882 թւին զօրքի և նաւատորմի վրա 14 միլիօն ֆունտ ստէրլինգ, իսկ 1887 թւին 17 միլիօն, Գերմանիան 1882 թւին ծախսում էր 20 միլիօն, իսկ 1887 թւին՝ 31 միլիօն, Սպանիան 1882 թւին՝ 2 միլիօն, իսկ 1887 թւին՝ 8 միլիօն, Իտալիան 1882 թւին՝ 11 միլիօն, իսկ 1887 թւին՝ 17 միլիօն, Ռուսիան 1882 թւին՝ 34 միլիօն, իսկ 1887 թւին՝ 39 միլիօն, Ֆրանսիան 1882 թւին՝ 37 միլիօն, իսկ 1887 թւին՝ 39 միլիօն։

Եւրոպական պետութիւնների զինաթափի հարցը շարունակում է և այժմ զբաղեցնել ոչ թէ միայն գրողների, քարոզչիտների և փիլիսոփաների, բայց և պետական մարդկանց ու թագաւորների մտքերը։ Գերմանական Վիլհելմ II կայսրը, ինչպէս հաղորդում էին լրագիրները, նորերումս միտք է արտայայտել թէ անհրաժեշտ է որոնել այն հնարները, որոնց օգնութեամբ կարելի լինէր վերջ դնել անընդհատ պատերազմներին քաղաքակիրթ աշխարհում, և որոնք կարող էին ապահովացնել ընդհանուր խաղաղութիւնը։

Այդ միջոցներից ամենաէականը՝ եւրոպական դիպլօմատների կոնգրեսն է, այսինքն եւրոպական պետական մարդկանցից բաղկացած միջազգային կոնգրեսի գումարումն է։

Գ. Ա.

---

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

—

Յունվարի 21-ին

Բարեգործական ընկերութեան տեղական բաժինը, ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրներից, որոշել է յետաձգել գրադարան-ընթերցարանի բացումը առժամանակ, մինչև կառուցանէ ընթերցարանի համար յատուկ շինութիւն։ Այդ նպատակի համար նա դիմել է հասարակութեանը կամաւոր նուիրատւութիւն խնդրելու։ Նոյնպէս դեռ գրադարանը չը բացված, նա հաստատված կանոնադրութիւնը նորից փոփոխութեան է ենթարկել. այս փոփոխութիւնը [illegible] է մանաւանդ ընթերցարանը յաճախողների վճարի կողմից։ Հաստատված կանոնադրութեան մէջ որոշված էր՝ մուտքի վճարը երեք կոպ., ամսավճարը 40 կոպ., իսկ տարեկան բաժանորդագինը 2 ր. 50 կոպ.։ Այժմ մուտքը իջեցրել են 2 կոպէկի, ամսավճարը 25 կ., իսկ տարեվճարը 2 ռուբլու։ Մենք հակառակ չենք ոչ սեփական շինութիւն ունենալուն և ոչ յաճախողների վճարը պակսեցնելուն. սակայն, մեր կարծիքով, լաւ կը լինէր, եթէ շուտով բացվէր ընթերցարանը, թէկուզ ուսումնարանական պարապ շինութիւնների մէջ, մինչև վարչութեան ծրագրած շինութեան գլուխ բերելը։ Արդէն ընթերցարանի անունով վարչութեան մօտ կան երկու հարիւր հատորից աւելի գրքեր և 300 ռուբլուց աւելի կանխիկ դրամագլուխ հանգանակած, նուիրված և ներկայացումներից գոյացած. կարելի է փոքրից սկսել և յետոյ աստիճանաբար մեծացնել, և ով գիտէ հանգամանքները որքան նըպաստաւոր կը լինեն. հակառակ դէպքում տարիներով ես սպասել. «մի մեռնիր, իշուկս, գարուն բացվելիս քեզ եօնջա կը տամ»։ Եւ յետոյ ինչ հարկաւոր է, այժմեանից, դեռ գրադարանը չը բացված, կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկել. կարելի է առ այժմ գործադրել հաստատված կանոնադրութիւնը և յետոյ, եթէ հարկը պահանջէ, ընդհանուր ժողովի քննութեան ենթարկել և ընդհանուր ժողովում պարզել փոփոխութեան հարցը և ոչ թէ վարչութեան խորհրդի մէջ անել ամեն բան։

Տեղիս թատերասէրների խումբը ժողով գումարելով, ընտրել է իր միջից մի յանձնաժողով, հինգ անձերից բաղկացած, որի պարտականութիւնը լինելու է ղեկավարել ապագայ ներկայացումները, հսկել բեմական սեփականութիւնների վրա, պիէսաներ ընտրել, դերեր բաժանել, հոգալ ներկայացումների միջոցի զանազան պահանջները և աստիճանաբար հարստացնել բեմը։ Գովելի է մեր թատերասէրների եռանդը։ Երանի թէ այդ կարգադրութիւնը վաղուց լինէր, և մենք այժմ կունենայինք բաւական պաշար բեմական պարագաների և անհոգ հոգաբարձուների շնորհով տասնեակ տարիներում մեր ներկայացումների արդիւնքը, զգեստները, դեկօրացիաները չէին ցրվի և անհետանայ։ Ափսոս որ բարի գործն էլ միշտ որ և է խոչընդոտի է հանդիպում. ինչպէս և մեր թատերասէրների այդպիսի կարգադրութիւնը, վիրաւորելով մի պարոնին, նա ձգտում է երկպառակութեան որոմ սերմանել խմբի մէջ, սակայն մեր թատերասէրների մէջ նկատվում է մի այնպիսի հաստատամտութիւն, որ արհամարհում են այդ որոգայթները և երբէք չեն ենթարկվելու հակառակորդի ննջութեան, թէկուզ այդ անհատը կողմնակի թէ իսկապէս հեղինակութիւն ունենայ։

Ինչպէս լսում ենք, արդէն խումբը որոշել է երկու ներկայացումներ ևս տալ մինչև մեծ պասը. առաջին ներկայացումը լինելու է «Ոճրագործի ընտանիքը» փետրվարի 17-ին, իսկ երկրորդը՝ «Վարդանանց Պատերազմ» և «Կրթ-կրթ» փետրվարի 28-ին. ցանկանում ենք աջողութիւն։

Ամսիս 17-ին, տեղիս գերապատիւ յաջորդ հայր Շիրակունի հրաւիրել էր ընթրիքի Ախալցխայի հայ հասարակութեան ներկայացուցիչներին։ Ընթրիքին մասնակցում էին մօտաւորապէս յիսուն անձինք։ Հայր Շիրակունու ցանկութիւնն է եղած ծանօթանալ հասարակութեան հետ ի մօտոյ և այդ աջողվեց հայր սուրբին։ Ամենքն աշխատում էին մի բան խօսել իրանց կենաց թասերի վրա և խօսում էին. բայց, Տէր Աստուած, որքան կեղծիք, որքան շողոքորթութիւն. անծանօթ մարդը մի այնպիսի գաղափար կը կազմէր սրանց խօսքերից, թէ սրանք բոլորն էլ աշխարհի ամենալուսաւոր կենտրոններից հաւաքված մի մի հերոսներ են, լուսաւորութեան և քաղաքակրթութեան փայլուն աստղեր. բայց մի՞թէ խօսքերով պիտի շլացնենք միմեանց. ո՞ւր են ձեր կատարած գործերը. ո՞ւր են ձեր մարդասիրութեան կենդանի ապացոյցները. ինչ էք արած. աղքատանոց, հիւանդանոց, [illegible]նոց, բժշկանոց, հասարակական ընթերցարաններ, բարեկարգ դպրոցներ, հաստատ թատրոն և այլ բարենպատակ հիմնարկութիւններով էք պարծենում արդեօք. մինչև անգամ յիսուն տարուց աւելի, Կարինից հեռներդ բերած աղքատների հոգաբարձութիւնն էլ քամու տուիք և չը կարողացաք պաշտօնական հաստատութիւն բերել տալ։ Բաւական է պարծենալ, գործ շինեցէք պարոններ, գործ։

Բ.

---

### ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ

—

Յունվարի 23-ին

Նոր տարուն ուրախ դիմաւորելու համար տեղիս երկսեռ ուսումնարանի դահլիճում հոգաբարձութեան կարգադրութեամբ սարքված էր պարահանդէս։ Ժողովված էին մօտ 60 հոգի։ Երիտասարդներից շատերը, մանաւանդ օրիորդները, բաւական պարեցին տեղական զանազան պարեր, ապա սիրողների մի խումբ ներկայացրեց «Կրթ-կրթ» պիէսան։ Ժամի ուղիղ 12-ին շնորհաւորեցին իրար Նոր-տարին, որից յետոյ սկսվեց օրիորդաց ուսումնարանի ձեռագործի վիճակախաղը։ Ուսումնարանի օգտին զուտ արդիւնք մնաց 40 ռուբլի։

Ամսիս 20-ին տեղիս սիրողների մի խումբ ուսուցիչների մասնակցութեամբ, երկսեռ ուսումնարանի դահլիճում նոյն ուսումնարանի օգտին մի ներկայացում տուեց։ Խաղացին «Արշակ Բ» ողբերգութիւնը և «Գիշերվայ սաբրը խէր է» վօդըվիլը։ Ողբերգութիւնը միջակ կատարել են, իսկ վօդըվիլի մէջ օրիորդներ Վ. Տէր-Մարտիրոսեանց (Կեկէլ) և Գ. Թադվերանեանց (Մարթայ) իրանց դերերը շատ լաւ խաղացին։ Ժողովուրդն այնպէս էր լցվել, որ ասեղ գցելու տեղ չէր մնացել, որովհետև տեղերի գները սովորականից անհամեմատ էժան էին նշանակված։ Անտրակտներում լսվում էր զուռնայի անախորժ ձայնը։

Եղանակը մեղմանում շատ մեղմ է անցնում։ Հացահատիկների գինը բաւականաչափ էժան է. ցորենի խալվարը (30 պուդ) արժէ 15—17 ռուբլի, գարին 8—10 ռուբլի, կտաւատը 19—21 ռուբլի, թխած հացի ֆունտը 2 կոպէկ։

Ս. Բ.

## ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յունվարի 22-ին

Չը նայելով որ երկաթուղին Բաթումում աւելի քան եօթ տարի է, որ գոյութիւն ունի, այնուամենայնիւ փոքր ի շատէ կարգին կայարան այս քաղաքում դեռ ես պատրաստ չը կայ. եղածը տախտակեայ մի բոլորովին հասարակ շինութիւն է, որը անուանվում է «ժամանակաւոր շինութիւն». բայց և այնպէս նոր կայարանը արդէն շինվում է քաղաքի մէջ և պէտք է ասած, որ շատ շքեղ. միայն այդ նոր շինութիւնը տեղի անյարմարութեան պատճառով, ապրանք ստացող և ուղարկողների համար բոլորովին ձեռնտու չէ: Մինչև այսօր երկաթուղու կայարանը, ռուսաց շոգենաւների ընկերութեան նաւամատոյցը, և մաքսատունը միմեանց մօտ էին համարեա, և ապրանքը շոգենաւից երկաթուղի կամ երկաթուղուց շոգենաւ փոխադրելը շատ հեշտ էր. իսկ այսուհետև բացի աւելորդ ժամանակ կորցնելուց, նեղութիւնից, պէտք է մի քանի կոպէկ ևս ապրանքի պուդին աւելի ծախս վճարել, որը ի հարկէ վաճառականութեան մէջ մեծ նշանակութիւն ունի:

Առաջ յօգուտ քաղաքի այստեղ մտած և այստեղից արտահանված ապրանքներից պուդին $1/5$ կոպէկ վճար էին առնում. բայց այժմ արդէն աւելի քան մի տարի է, որ այդ վճարի չափը բարձրացրած է պուդին 1 կոպէկի, առանց բացառութեան ամէն տեսակ ապրանքների համար: Այդ փողերով, որոնցից տարվայ ընթացքում պատկառելի գումար է կազմվում, պիտի վերջացնվի նոր կառուցվող նաւահանգստի շինութիւնը, և քաղաքի մէջ եղող ծովափը պարսպով պատվի. այդ ծովափը, պէտք է ասած, որ չափից դուրս կեղտոտ է պահվում:

Ծովը այստեղ, նոյն իսկ ափի մօտ, ահագին խորութիւն ունի, այնպէս որ շոգենաւերը կանգնում են ափից բոլորովին մօտիկ. այդ հանգամանքի պատճառով ծովափի վրայ մի քանի յարկանի տների շինելը արգելված է: Այստեղ ամբողջ ծովափի երկարութեամբ միայարկ խանութներ են, որոնցից մեծ մասը հիւրանոցներ—ռեստորաններ: Նոր մարդը կը զարմանայ այդ հիւրանոցները տեսնելով. առաւօտից մինչև երեկոյ լի են այդտեղ ամեն տեսակ մարդիկներով, որոնք շարունակ դոմինօ են խաղում և նարգիլէ ծխում: Տաճկաստանցի հիւրանոցի տէրը, ֆէսը գլխին մի հայ, կանգնած է «գախլի» յետևում մի տեսակ ինքնաբաւական և հպարտ դէմքով. երբ դուրս է գալիս լակէյը, ձեռքին մի որ և է բան բռնած, նրա կողքով անցնելու ժամանակ բղավում է որքան ուժը ներում է. «Եդիեա բէշ», և ֆէսաւոր պարոնը մատիտով ինչ որ գրում է թղթի վրա: Տաճկական հաշուապահութեան այդ էլ երևի մի նոր եղանակն է: Իմ հարցին լակէյը պատասխանեց, որ «Եդիեա բէշ» բղավելով, նա ուզում էր հասկացնել հիւրանոցի տիրոջը, որ եօթերորդ սեղանին հինգ կոպէկի բան է տարվում, բայց միթէ մի մարդավարի միջոց չը կայ հաշիւ պահելու, որ Թիֆլիսի համալների պէս այդպէս բղաւել ստիպված չը լինեն ծառայողները, մանաւանդ որ հիւրանոցում գտնվող հասարակութիւնը, պէտք է ասել, որ մշակներ և հասարակ դասակարգի մարդիկ չեն:

Ար. Ապ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղական լրագիրները հաղորդում են, որ վեհափառ կաթողիկոսը այնքան ծանր կերպով հիւանդ է, որ բժիշկներն արդէն յոյսը կորցրել են նրա առողջանալու մասին:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են, որ վեհ. Մակար կաթողիկոսի հիւանդութիւնը բաւական ծանրացել է: Մտադրութիւն կայ ուրիշ տեղերից բժիշկներ հրաւիրել: Վերին աստիճանի ծանրացած լինելու պատճառով վեհափառը դժուարութեամբ է դիմանում որ և է տկարութեան:

—

Թէհրանից մեզ տեղեկացնում են, որ պարսից պետական գանձարանը հրատարակել է թղթադրամ, որ մինչև այժմ Պարսկաստանում չը կար: Առ այժմ այդ փողը Պարսկաստանի ժողովրդի մէջ քիչ է տարածվում:

—

Օ. Շմիդտի «Գալիա» անունով գեղեցիկ գրքոյկը այս օրերս լոյս տեսաւ հայերէն լեզուով, թարգմանութեամբ Ս. Հախումեանի և հրատարակութեամբ «Աղբիւրի»:

—

Յաճախ մեզ դիմում են հարցնելով, թէ որտեղ է ծախվում Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի «Ամուսնական խնդիրներ» աշխատութիւնը, որ նորերս լոյս է տեսել: Ցաւում ենք, որ անկարող ենք լուծութիւն տալ բազմաթիւ հետաքրքրվողների ցանկութեան:

—

Այս օրերս Պետերբուրգից վերադառնալու է Թիֆլիս կովկասեան կառավարչապետ գենէրալ Շերեմետև:

—

Մեզ հաղորդում են Երևանից, որ մի խումբ անձինք իրանց պարտք են համարում ճաշ տալ նահանգապետ Շալիկօվին, որը շուտով պէտք է հեռանայ Երևանից իր նոր պաշտօնատեղին՝ Քութայիս գնալու համար:

—

ԱԿԿԵՐՄԱՆ քաղաքից մեզ գրում են, որ դեկտեմբերի վերջերում այդ քաղաքի հայոց եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց ուսումնական Մկրտիչ Էմինի յիշատակին: Այդ առիթով Աբրահամ քահանայ Մարութեանց մի քարոզ ասեց եկեղեցում, ծանօթացնելով ունկնդիրներին հանգուցեալի կեանքի և գործունէութեան հետ:

—

ԱԿԿԵՐՄԱՆԻՑ մեզ գրում են հետևեալը. «Այստեղ եղանակը այժմ շատ փոփոխական է. օրամէջ ձիւն կամ անձրև է գալիս և շատ ցուրտ է լինում»:

—

Մեր երգիչ պ. Բ. Ամիրջանեանց խնդրում է մեզ յայտնել, որ յունվարի 28-ին նշանակված նրա կոնցերտը Բանկի թատրոնում, լինելու է փետրվարի 5-ին, երեքշաբթի, երեկոյեան ժամը 8-ին, Բանկի թատրոնում, մասնակցութեամբ տ.տ. Ֆերգիս-Դավիդովայի և Ռոմանովայի և պ.պ. Սարաջևի, Ցարինի, Պետրոսեանի, Փավլինովի և ուրիշների: Յունվարի 28-ի կոնցերտի համար վերցրած տոմսակները այժմ ունեն և այս կոնցերտի համար:

—

Ուրբաթ, փետրվարի 1-ին, տեղական թատրոնում կը ներկայացվի «Րիգոլէտտօ» օպէրան, տ. Ֆլաշա-Վանդերիկի և Բուրխարտի մասնակցութեամբ, յօգուտ Թիֆլիսի 1-ին գիմնազիայի չքաւոր աշակերտների: Պէտք է յուսալ, որ այդպիսի մի բարի նպատակ մեծ բազմութիւն կը գրաւէ դէպի թատրոն:

—

Կիրակի, փետրվարի 3-ին, կը կայանայ Թիֆլիսի Միքայէլեան Արհեստաւորաց դպրոցի տարեկան ակտը և այդ դպրոցի տասնամեայ գոյութեան հաշւետուութիւնը: Որպէս յայտնի է, այդ դպրոցը հիմնվել է նախկին քաղաքագլուխ հանգուցեալ Իշխան Նազօն Թումանօվի նախաձեռնութեամբ, գլխաւորապէս մեր քաղաքի արհեստաւոր դասակարգի զաւակների կրթութեան համար: Դպրոցն ունի երեք բաժանմունքներ՝ հայոց, ռուսաց և վրաց, և առարկաները իւրաքանչիւր բաժանմունքում աւանդվում են մայրենի լեզուով:

—

Պարտաւորութիւն ենք համարում ասել, որ այն 50 րուբլին, որը ուղարկել է մեզ Վարշավայից պ. Միքայէլ Ջոհրաբեան յօգուտ փափազեան քոյրերի և որը մենք յանձնեցինք «Тифлис. Листокъ» լրագրի խմբագրութեանը, նուիրել է ոչ թէ ինքն պ. Ջոհրաբեան ամբողջապէս, այլ մի քանի անձերից է հանգանակել, ինքն այդ գումարից 30 րուբլի նուիրելով:

—

Մեր թղթակիցը ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ գրում է մեզ, որ յունվարի 18-ին այդ քաղաքի առևտրական ակումբի դահլիճում, յօգուտ Ազամեանի ներկայացրին «Կոյր» դրաման: Դահլիճը թէև լի էր, բայց գները աժան լինելով, ներկայացումից գոյացած զուտ արդիւնքն եղաւ միայն 100 րուբլի:

—

Ստացանք ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մի փոքրիկ գրքոյկ՝ ժողովրդական ընթերցանութեան համար «Փոքրիկ լրտես» վերնագրով: «Փոքրիկ լրտեսը» Ա. Դոդէի այն պատմութիւնների շարքին է, որն առաջացաւ ֆրանս-պրուսական պատերազմից յետոյ: Արդէն ծանօթ է մեր հասարակութեան նրա մի այլ գրուածքի թարգմանութիւնը «Բեռլինի պաշարումը» (նմանապէս Պետերբուրգում հրատարակած): Դոդէ, առանց զարդարանքների նկարագրում է ֆրանսիացու սէրը դէպի իր հայրենիքը: Փոքրիկ լրտեսը մի գեղեցիկ դրամա է, որ կատարվում է մի փոքրիկ երեխայի սրտում, երբ նա գրաւվելով շլացող ոսկով լրտեսում է ֆրանսիացիներին: Երկու խօսքով կամ ճիշդն ասած, գործով է նկարագրած լրտեսի հայրը, բայց ահագին սէրը դէպի իր թշուառ որդին և հայրենիքը լրացնում են նրա բարոյական պատկերը: Արժէ կարդալ այս փոքրիկ վէպիկը: Գինն է 2 կոպ.: Տպագրութիւնը գեղեցիկ է, ինչպէս առհասարակ Պետերբուրգի բոլոր հրատարակութիւնները:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 26-ին Մարդասիրական ընկերութեան ընդհանուր ժողովն է լինելու: Հրաւիրաթերթերը և հաշիւը շատ ուշ են ցրված: Երէկ, ամսիս 22-ին, ոչ մի տեղ դրա մասին վաղօրօք յայտարարված չէ եղել: Դա անհրաժեշտ էր, եթէ աչքի առաջ ունենայինք, որ հաշիւ կարդալու և խորհրդի նոր անդամներ ընտրելու համար, ինչպէս և ամէն մի գործի համար, ժամանակ է հարկաւոր: Մի բան, որը աչքի է ընկնում անդամներին ցրված դրամական հաշւի մէջ, այն է, որ այս ահագին քաղաքում ընկերութեան խորհուրդը կարողացել է տարեկան անդամներ գտնել ընդամենը 54 հոգի: Հետաքրքիր է իմանալ թէ արդեօք ջանք ու միջոց է գործ դրել ընկերութեան վարչութիւնը տարեկան անդամներ ձեռք բերելու համար: Սակայն ասում են, թէ տարի է եղել, որ 13 անդամ է ունեցել, ուրեմն կարող ենք մխիթարվել: Հետաքրքիր է իմանալ, թէ ընկերութեան տարեկան անդամը, եթէ նա պատկանում է իգական սեռին, կարող է արդեօք խորհրդի անդամ, կամ նախագահ ընտրվել, թէ ոչ:»

—

Շվէյցարիայի Ցիւրիխ քաղաքից մեր ստացած մի մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ այս րոպէիս Ցիւրիխի համալսարանում ուսանում են երկու հայ ուսանողներ, երկուսն էլ ուսանում են բնագիտական գիտութիւնները փիլիսոփայական ֆակուլտէտում:

—

ՕԴԵՍԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ բաւական ցուրտ է, բայց մանաւանդ անտանելի է սառն քամին, որը սառեցրել է ձիւնով ծածկված փողոցները, այնպէս որ նրանց վրայով շատ դժուար է լինում ման գալ: Երկու օր առաջ մի խեղճ կին, վայր ընկնելով փողոցում, կոտրել է կուռը»:

—

ՕԴԵՍԱՅԻՑ մեզ գրում են. «Տեղիս համալսարանի պրոֆեսոր Զիժօվ, դոկտորի աստիճանը ստանալու համար, այս օրերս պաշտպանեց իր գիտնական շարադրութիւնը «Իրաւունքը համաձայն Լօրէնց-ֆօն-Շտէյնի վարդապետութեան» (Право по ученію Штейна) վերնագրով: Համալսարանի դահլիճը լի էր բազմութեամբ, մանաւանդ ուսանողներով: Դիսէրտացիային պաշտօնապէս դիմախօսում էին Սօկոլսկի և Ֆեոդորովիչ պրոֆեսորները, իսկ մասնաւոր կերպով դիմախօսեցին Նեչաեվ և Լանգէ: Զիժօվ ստացաւ իրաւաբանութեան դոկտորի աստիճանը»:

—

«Кавказъ» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալէքսանդր Մատինօվ դիտաւորութիւն ունի երեք ամսից յետոյ հրաժարվել իր պաշտօնից: Նա կամենում է այդ կարճ ժամանակամիջոցում անցկացնել Դումայում մի քանի անհրաժեշտ առաջարկութիւններ և ապա հեռանալ քաղաքագլխի պաշտօնից:

—

ՌՈՍՏՈՎ (Դոնի վրա) քաղաքից մեզ հաղորդում են, որ անցեալ տարվայ Մադրիդի համաշխարհային ցուցահանդէսին այդտեղի գործարանատէր Սէրովբէ Անանեան ուղարկել է իր ապրանքները՝ պապիրոսի թղթի տետրակները և գիլզաները: Այժմ Մադրիդի ցուցահանդէսի ժիւրին պաշտօնապէս յայտնել է, որ պ. Անանեանի ապրանքներն արժանացան ոսկէ մեդալի և պատուաւոր դիպլոմի, որը առաջին պարգևն է համարվում: Պատուաւոր վկայաթուղթը և մեդալը արդէն ստացված են Ռոստովում. առաջինը գրաւում է տեսնողի ուշադրութիւնը գեղարուեստական տեսակէտից:

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ ցրտերը, քամին և առատ ձիւնը արտակարգ երևոյթ են մեզանում և միանգամայն սարսափեցնում են մեզ ամենքիս: Երեք շաբաթ շարունակ Խարկօվից ոչ մի տեղեկութիւն չունէինք և միայն յունվարի 21-ին եկաւ առաջին պօստը այդտեղից, թէև մինչև այժմս էլ երկաթուղու երթևեկութիւնը դեռ ևս կատարելապէս չէ կանոնաւորվել: Եօթ օր շարունակ փակված էր Վօրօնէժի ճանապարհը և 10 օր՝ Վլադիկավկասինը: Այս վերջինը մինչև այժմ դեռ կատարելապէս բացված չէ և այդ տարածութեան վրա մի 10—15 վերստ պէտք է սայլակով անցնել: Թանգութիւնը մեզանում շատ զգալի է. չքաւոր դասը մեծ կարօտութեան մէջ է: Պէտք է ասել, որ Բարեգործական ընկերութիւնը մեծ աշխուժութեամբ օգնութեան ձեռք է հասցնում կարօտեալներին, անխտիր կերպով: Անկելանոցի ժամանակաւոր կառավարիչները նոյնպէս օգնում են կարօտեալներին: Գովելի է այդ կողմից մանաւանդ պ. Միքայէլ Մահտեսեանի եռանդը»:

—

«Մշակի» անցեալ 11-որդ համարի մէջ տպված «Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը» վերնագրով յօդուածում մի սխալ մտաւ թւանշանների մէջ. ընկերութեան ընդհանուր մուտքի թւերում տոկոսներից ստացված գումարը պէտք է լինէր 2,300 րուբլի և ոչ թէ 52 րուբլի ինչպէս սխալմամբ տպած էինք:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ Կ. ՊՈԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

«Դատական և կրօնական գործոց նախարարութեան կողմէ ի Պատրիարքարան ուղղեալ պաշտօնագիր մը հաղորդած է կայս. բարձր իրատէ մը, որուն համաձայն ներում շնորհուած է Վանեցի երեք աքսորեալց՝ Օտեանի, Նաթանեանի ու Յովհաննէսի, բաւական համարելով յիշեալ ազգայնոց չորս տարուան աքսորը: Պատրիարք Հայրն անմիջապէս կայս. սոյն իրատէն նամակաւ մը հաղորդեց Վանայ պատրիարքական փոխանորդին, յանձնարարելով որ այս առթիւ ևս հանդիսաւոր բարեմաղթութիւններ ընեն վասն կենաց և բարօրութեան Սուլթանին»:

«Տպագրական Տեսչութիւնն Թուրք լրագրաց միջոցաւ կը ծանուցանէ թէ Քարբերդէն, Բաղէշէն, Սեբաստիայէն, Էնկիւրիէն, Տրապիզոնէն, Կարինէն, Տիարպէքիրէն, Հալէպէն ու Ադանայէն դեկտեմբեր 11 ու 12 թուականաւ եկած հեռագրերու համաձայն, այդ նահանգաց մէջ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, որ և է դէպք չէ պատահած և թէ կատարեալ անդորրութիւն կը տիրէ»:

«Թարիգ» լրագիրը Ամեն. Խրիմեան Սրբազանի ի մօտոյ Երուսաղէմ ուղևորելը ծանուցանելու առթիւ, կըսէ թէ Սուլթանն՝ ի նշան այն բարձր համակրանաց զոր կը տածէ առ Խրիմեան Սրբազան, բարեհաճած է տասը հազար ղրուշի դրամական պարգև շնորհել, որպէս զի Ն. Ամենապատուութիւն կարենայ ճամբորդել ամենայն հանգստաւէտութեամբ»:

### ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՒ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պոլսի հայոց լրագիրները յունվարի 5-ից տպագրել են հետևեալը. «Պատրիարք Հայրն երէկ առաւօտ Մայր-եկեղեցի գնաց և ներկայ գտնուեցաւ կրօնական արարողութեանց: Յաւարտ արարողութեանց, Նա Պատրիարքարան վերադարձաւ: Մայր-եկեղեցւոյ քահանայից դասն ու Թաղական խորհուրդը Ս. Պատրիարք Հօր ներկայացան և Ն. Ամենապատուութեան՝ Վեհ. Սուլթանին ներկայանալու պատւին ունենալուն ու Պատրիարքական պաշտօնը վերստանձնելուն առթիւ շնորհաւորութիւններ մատուցին:

Պատրիարք Հայրն ի պատասխանի ըսաւ թէ Վեհ. Սուլթանը վստահ է Հայոց հաւատարմական զգացմանց վրայ, թէ անոնք որք վերջերս հաւատարմութեան հակառակ ընթացից մէջ գտնուեցան փոքր մաս մը կը կազմէին և անոնց ընթացքը բնաւ չի կրնար արատ մը բերել ընդհանուրին հաւատարմական զգացմանց և թէ Հայոց ամենամեծ փափաքն է ամենայն անդորրութեամբ ապրիլ Վեհ. Սուլթանի բարձր հովանւոյն ներքև:

Պատրիարք Հայրն յետոյ բարեմաղթութիւններ ըրաւ վասն կենաց ու բարօրութեան Սուլթանին, ըսելով որ Բարձրեալն Աստուած Ն. Վեհափառութեան հովանին անպակաս ընէ բոլոր Օսմանցւոց և ի մասնաւորի Օսմանցի Հայոց վրայէն:

ինչպէս որ զանազան գաւառական ազգային վարչութիւնք փութացած էին հեռագրաւ և նամակաւ շնորհաւորել Պատրիարք Հայրն՝ վերստանձնած ըլլալուն համար Թուրքիոյ Հայոց Պատրիարքական պաշտօնը, նոյնպէս Վանայ Պատրիարքական փոխանորդ Թադէոս վարդապետ և կրօնական ու քաղաքական ժողովոց բոլոր անդամները հեռագիր մը ստորագրած և ուղղած են առ Պատրիարք Հայրն, և երախտագիտական զեկուցմամբ շնորհակալութիւն կը յայտնեն Օգոստափառ Սուլթանին այն բարձր իրատէյին համար, որով Պատրիարք Հայրը վերադարձաւ յաթոռ Պատրիարքութեան:

Հեռագիրն ստորագրողք կը յաւելուն թէ ամբողջ Վանայ Նահանգին ժողովուրդը, ուրախութեամբ լցուած, այս առթիւ ևս գոհաբանական աղօթքներ ըրեր է վասն կենաց և բարօրութեան Սուլթանին»:

## ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 15 յունվարի

Վերջապէս, երկար և անհամբեր սպասելուց յետոյ, բժշկական աշխարհն այսօր արժանացաւ Կօխի բերանից լսելու, թէ ինչ բան է նրա մեծ գիւտը: Կարդալով Կօխի զեկուցումը իր նոր դեղի մասին, ընթերցողը չփոթված բացականչում է. «հէնց այդ էր....»: Եւ ճշմարիտ որ ուրիշ բան չէ Կօխի գտած այդ հնարը, եթէ ոչ թոքախտի միկրօբից հանած էկստրակտը (հիւթը): Ուրեմն այս գիւտը մի անսպասելի, երկնքից ընկած մանանայ չէր, ինչպէս մինչև այժմ կարծում էին, այլ անմիջական հետևանք էր այն մեծ սկզբունքների, որոնք դրվել էին Ֆրանսիայում և որոնք դիտմամբ չեն յիշվում այստեղ, Գերմանիայում: Բժշկի համար, որը լայն հայեացք ունի իր գիտութեան վրա և մեծայոյս է նրա զարգացման մասին, այն փաստը, որ Կօխի գիւտը հին սկզբունքների հետևանք է, անչափ ուրախալի է: Այս տեսակէտից նա աւելի նշանակութիւն ունի, քան եթէ նա լինէր մի անսպասելի, յանկարծակի երևոյթ:

Ձեզ յայտնի է, բացի սրանից, որ այժմ այլ ևս չը կայ այն անասելի ոգևորութիւնը, որը բռնում էր դէպի Բերլին աշխարհիս բոլոր անկիւններից՝ թէ հիւանդներին և թէ առողջներին: Այժմ այդ ոգևորութեան չափը մեղմացել, պակասել է այն պատճառով, որ փորձը ցոյց է տուել թէ դեռ շատ բան կայ խորհելու ու գործելու այդ մասին, և թէ Կօխի յայտարարած նոր մեթօդով բժշկելուց մինչև այժմ ստացած հետևանքները՝ այնքան աննշան են, որ չեն կարող արդարացնել այդ գիւտի և նրա միջոցով բժշկելու վրա սկզբից դրված յոյսերը:

Շուտով մանրամասնաբար կը գրեմ այդ խնդրի մասին:

Բժշկ. Վահան Արծրունի

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, 12-ին յունվարի

Ծննդեան գիշերը տեղիս ուսուցիչ պ. Կ. Մ., ինչպէս ամեն տարի, այս տարի ևս աշակերտների հետ «Աւետիս» շրջագայելով, գոյացրեց յօգուտ ուսումնարանի 20 թուման (56 րուբլի): Կեցցէ Ռաշտի հայութիւնը, որ իր գրպանը միշտ բաց է ազգային գործերի համար:

Դեկտեմբերի 20-ին, գիշերվայ 9 ժամին, կիսամսեայ հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց տեղիս անգլիական հիւպատոսը, 25 տարեկան հասակում և մեծ հանդիսով թաղվեց հայոց գերեզմանատանը, իսկ հոգեվարքի ժամանակ հասաւ տեղս Թեհրանի անգլիական դեսպանից չքանշանը և հաստատութեան թուղթ հանգուցեալի համար:

Այս տարի տեղիս ընթերցարանի վարչութիւնը զանազան հանգամանքների պատճառով, ոչ եօթնամեայ տարեդարձ կատարեց և ոչ ժողովրդին հաշիւ ներկայացրեց, բայց վճռեց գրատունը և ընթերցարանը կարելոյն չափ հարստացնել.... բայց ում համար, քանի որ ընթերցարանում բաժանորդ չը կայ, կարդացող չը կայ....

Անցեալ ամսին Ռուսաստանի յայտնի մի ընկերութիւն, որը նոր էր ձեռնամուխ եղել Պարսկաստանում շաքարի և մանուֆակտուրային վաճառման, Էնզէլիից դէպի Փիրբազար ապրանք ուղարկելու ժամանակ, Մօրդօվ գետի թիավարները նաւի մէջ կաւի բռնվելով, ջուր են տալիս նաւը և քառասուն հակ մանուֆակտուրային ապրանք ընկնում է գետի մէջ, որից ընկերութիւնը մօտ 4,000 րուբ. չափ վնաս է կրում. իսկ սրանից մի ամիս առաջ պ.պ. Մութաֆեանցների 96 հակ շաքարը նոյն տեղն է խորասուզվում: Եւ ահա ռուսաց կառավարութիւնը աչքի առաջ ունենալով այդպիսի մշտական երևոյթները, անընդհատ կերպով աշխատում է կանոնաւոր նաւագնացութիւն վերահաստատել Էնզէլիից մինչև Փիրբազար. այս մասին բանակցութիւններ են շարունակվում պարսից կառավարութեան հետ:

Ա.Գ.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից հեռագրում են, որ յունվարի 18-ին (30-ին) այդտեղ վախճանվեց անգլիական պարլամենտի անդամ, յայտնի Բրէդլօ, որը իր ժամանակին մեծ աղմուկ հանեց իր բողքներով անգլիական ձևապաշտութեան և փարիսեցիութեան դէմ: Նա պահանջում էր երդման ոչնչացումը և նրա տեղ առաջարկում էր ընդունել հասարակ խոստումը: Պարլամենտի անդամ ընտրվելով, Բրէդլօ ինքն էլ միշտ հրաժարվում էր երդվելուց և այդ դէպքերում Նախագահի հրամանով բռնի կերպով հեռացվում էր պարլամենտական նիստերի դահլիճից:

—Մայրաքաղաքի լրագիրներին Կ. Պօլսից հեռագրում են, որ Սուլթանը կրկին ներումն շնորհեց 11 հայերին:

—Պարիզում և Լօնդօնում կարծում են, որ Կրիսպիի հրաժարականը այն հետևանքը կունենայ, որ Իտալիա և Ֆրանսիա կը բարեկամանան:

—Ամբողջ Պօրտուգալիայում կալանաւորում են աչքի ընկնող հանրապետականներին: Սպանիական սահմանները պահպանվում են զօրքերով: Օպօրտօում հանրապետականները քանդեցին քաղաքային տունը:

—Վիլհէլմ կայսրի ծննդեան տօնի առիթով, Պարիզի գերմանական դեսպան կոմս Միւնստէրի մօտ մի փառաւոր ընդունելութիւն կար: Կոմս Միւնստէր դիմեց մի ճառով գերմանական գաղթականութեանը, որի մէջ ասեց թէ ապագան գեղեցիկ գոյներով է նկարվում իր աչքի առաջ: Գերմանիայում այժմ թագաւորում է երիտասարդ քաջասիրտ թագաւոր, որը իր ժողովրդի բարօրութեան համար վճռել է խաղաղութիւնը պահպանել: Վիլհէլմ II-ի գահ բարձրանալու ժամանակ երկիւղ էին կրում, որ մէկ միապետ, որը մի և նոյն ժամանակ և լաւ զինուոր է, չէ կարող պատերազմական դիտաւորութիւններ չունենալ: Այժմ ակներև է, որ այդ կասկածներն անհիմն էին. կայսրը աշխատում է պաշտպանել միայն այն, ինչ որ ժառանգել է իր պապից և հօրից, և մի և նոյն ժամանակ իրագործել բարձր կուլտուրական խնդիրը: Եւ կայսրը կատարելապէս համոզված է, որ դրա համար խաղաղութիւնը անպայման անհրաժեշտ է:

—Կ. Պօլսի լրագիրները գրում են. «Թէհրանէ կը ծանուցուի թէ Շահը Ֆրանսայի նուիրած է 12,000 քառ. մէթր տարածութեամբ գետին մը Թէհրանի մէջ՝ Ֆրանսական նոր դեսպանատան մը շինութեան համար»:

—Բերլինից գրում են, որ գերմանական ընդհանուր շտաբի կառավարիչ Վալդերզէի և Կապրիվիի մէջ տարաձայնութիւններ են պատահել, և դա է պատճառը, որ Վալդերզէ հեռացվում է պաշտօնից:

—Ազատամիտ կուսակցութիւնը այն կարծիքի է, որ Իտալիայի ֆինանսական նեղ դրութեան ամենագլխաւոր պատճառը—հարկերի ծանրութիւնն է:

—Պարիզի մի քանի լրագիրներն ենթադրում են, որ Կրիսպիի հրաժարվելու պատճառով երեքպետեան դաշնակցութիւնը կարող է քանդվել:

—Կ. Պօլսի լրագիրներում կարդում ենք. «Վ. Եհ. Սուլթանն իմանալով որ Հայոց Պատրիարքարանը դրամական անձուկ վիճակի մէջ կը գտնուի, հրամայած է 500 ոսկի տալ նմա՝ իբր կայսերական պարգև Ծննդեան տօնին առթիւ»:

—Երուսաղէմից գրում են, որ Խրիմեան Հայրիկ հասաւ Երուսաղէմ, և բնակութիւն հաստատեց Ս. Յակոբի վանքի մէջ:

—Չիլիայում մեծ անկարգութիւններ տեղի ունեցան. ժողովուրդը յարձակվեց աւստրիացի վիճակագրող պաշտօնեաների դէմ և նրանց ծեծեց: Պաշտօնեաները ապաստանվեցան մի քանի տներում: Զօրք է ուղարկված: Պաշտօնեաները շարունակում են ժողովրդագրութիւն անել զինուորների պաշտպանութեան տակ:

—Բերլինից գրում են, թէ այնտեղ լուր կայ, որ իբր թէ 1896 թւին Բերլինում պիտի լինի համաշխարհային ցուցահանդէս՝ ի պատիւ խաղաղութեան պահպանութեան 25-ամեակի:

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական լրագիրները լի են այն աղմուկների նկարագրութեամբ, որոնք տեղի են ունեցել Պարիզի «Thèatre Français» անուանված թատրոնում յայտնի ֆրանսիացի թատերագիր Սարդուի նոր պատմական «Thermidor» վերնագրով պիէսայի առաջին ներկայացման ժամանակ: Պիէսան վերցրած է ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակներից և հեղինակը անխնայ կերպով քննադատում է իր պիէսայում այն բարբարոսութիւնները, արիւնհեղութիւններն ու անթիւ գլխատումները, որոնք կատարվում էին Պարիզում տէրրօրի ժամանակ: Ներկայացման ժամանակ եղած աղմուկները քիչ է մնում կռւի փոխվէին՝ յատկապէս ամբոխի և ընտիր հասարակութեան մէջ: Ամբոխը համարում էր Սարդուի պիէսան մի ամբաստանութիւն յեղափոխութեան դէմ և աղաղակում էր «կեցցէ հանրապետութիւն, կորչի Սարդու», իսկ ընտիր հասարակութիւնը ծափահարում էր: Նոր աղմուկներին և խառնակութիւններին, որոնք ներկայացումից յետոյ թատրոնից անցան դէպի փողոց, տեղիք չը տալու համար՝ ֆրանսիական կառավարութիւնը արգելեց պիէսայի ներկայացումները Պարիզի թատրոններում:

⁂

Յայտնի է, որ շատ անգամ հասարակ մահկանացուների դէմքերը նման են լինում թէ արդէն մեռած և թէ դեռ ևս կենդանի երևելի մարդկանց: Մի խօսքով մարդկանց դէմքերի գծագրութիւնները անդադար կրկնվում են մարդկութեան մէջ: Այդ հետաքրքիր երևոյթին նորերումս նուիրել է մի ամբողջ աշխատանք անգլիական «Universal Review» ամսագրում Օկսֆորդի համալսարանի պրօֆէսոր՝ Բուտլէր: Նա հետազօտելով յայտնի մարդկանց դէմքերը՝ գտել է նրանց նման գծագրութիւններով դէմքեր իր ճանապարհորդութիւնների ժամանակ աշխարհիս ամեն ծայրերում: Իտալիայում ճանապարհորդելով, նա վագօնում ծանօթացել է մի իտալացու հետ, որը նման էր ֆրանսիացոց Ֆրանսուա I թագաւորին, Լօնդօնի մի պանդոկատէր սաստիկ նման էր Հէնրի VIII ֆրանսիացոց թագաւորին, շվէյցարական օմնիբուսների մի կօնդուկտօր նման էր Ֆալստաֆին, Իտալիայի, Վիչենցա քաղաքում ճանապարհորդ պրօֆէսօրը մի ջուխտ կօշիկ պատուիրեց մի կօշկակարին, որի դէմքը կատարելապէս նման էր աշխարհահռչակ Տիցիան նկարչին, իսկ Կանադայում Բուտլէր հանդիպեց մի հիւրանոցում Տիցիանի սիրուհու, երևելի Ֆօրնարինային նման մի աղախնու: Ապա պրօֆէսօրը հաւատացնում է մեզ որ երևելի Դարվին կատարելապէս նման էր Իուլիոս II Հռօմի պապին: Բուտլէր ճանաչում էր Լօնդօնում պօստային մի նամակաբերին, որի դէմքը երևելի գերմանացի բանաստեղծ Գեօթէի ճիշդ պատկերն էր, իսկ մի շոգենաւում նա հանդիպեց մի անգլիացու, որը զարմանալի նմանութիւն ունէր մեծ քանդակագործ և նկարիչ Միքել-Անջելօի հետ, այնուհետև Լագօ-Մաջիօրէ ծովակի ափում մի պահապան Դանտէի դէմքն ունէր, Մօդենա քաղաքում մի սափրիչ, որը սափրեց անգլիացի պրօֆէսօրի երեսը՝ վերին աստիճանի նման էր Ռաֆայէլ երևելի նկարչին, վերջապէս Դանտէի սիրուհի Բէատրիչէին մեր ճանապարհորդը նորերումս հանդիպեց Շվէյցարիայի մի հիւրանոցում. այդ աղջիկը, որը մի հրաշալի գեղեցկուհի էր և սաստիկ սիրում էր երաժշտութիւնը, աղախին էր յիշեալ հիւրանոցում:

⁂

Եղել է քարէ դար, եղել է և երկաթէ դար, ասում է «Новости» լրագիրը: Կալուածատէրերի ասելով մի ժամանակ ոսկէ դար էլ է եղել, երբ նրանց կալուածները դեռ ևս գրաւ դրված չէին ոչ կալուածական, և ոչ էլ ուրիշ բանկերում: Ինչպէս կը լինի XX դարը, որին արագ քայլերով մօտենում ենք: Մի քանիների կարծիքով, XX դարը կարող է թղթէ դար անուանվել: Թուղթը, յիրաւի որ, ահագին դեր է խաղում մեր հասարակական կեանքում: Թղթերի մէջն է երևում հարստութիւնը, որովհետև փողերը—ժամանակակից կուլտուրայի այդ գլխաւոր լծակը—թղթեայ են: Արծաթ փողերը կամ կառապաններին են տալիս, կամ ընծայում են ծառաներին կամ աղքատներին: Ոսկէ փողեր բոլորովին չը կան: Ոսկէ փողերի մասին միայն այն ժամանակն է լսվում, երբ ամբողջ վագօններով արտասահման են ուղարկում այդ փողերը: Պղնձէ դրամների մասին խօսել էլ չարժէ. օրինաւոր մարդիկ, երբ պատահմամբ պղնձէ փողեր են ձեռք բերում, շտապում են այդ պղնձէ դրամները փողոցի աղքատներին տալ, որպէս զի գրպանները չը ծանրաբեռնվեն և չը պատռվեն: Տպագրական թուղթը—լրագիրները, անկասկած, ահագին ոյժ ունեն, թէպէտ շատերը այդ հերքում են: Թղթի երկրպագուները սկսեցին այդ նիւթից երկաթուղային գծեր անցկացնել և տներ շինել: XX դարում թղթից կը սկսեն թնդանօթներ պատրաստել, որովհետև, Եւրօպայի խաղաղ զինուորման պատճառով, մետալը կը պակասի: Այդ պատճառով XX դարը պէտք է թղթէ դար անուանվի:

## „ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի: Երէկ վախճանվեց ներքին գործերի մինիստրի դիւանատան կառավարիչ Պագուլին:

ԲԵՐԼԻՆ, 28 յունվարի: Այսօր «Residenz Theatre» թատրօնի մէջ տեղի ունեցաւ ներկայացում բարեգործական նպատակով: Խաղացին կոմս Տօլստոյի «Լուսաւորութեան պտուղներ» անունով կօմեդիան: Պիէսան մեծ աջողութիւն ունեցաւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի: Բժշկական դեպարտամենտը վերջնականապէս մշակեց դեղագործական ապրանքների առևտրի նախագիծը: Որոշված է. թոյլ տալ վերոյիշեալ ապրանքների առևտուրը միայն առաջին գիլդիայի վաճառականներին. խիստ կօնտրօլ և ճիշդ կանօններ նշանակել. այդ կանօնների դէմ զեղծումներ անողներին խիստ պատասխանատուութեան ենթարկել. բոլորովին արգելել առևտուրը գիւղաքաղաքներում և գաւառական քաղաքներում, որոնց բնակիչների թիւը 3000-ից պակաս է: Նախագծին կցած է և նոր սակագին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի: Երէկ հեծելագնդի մօտ տեղի ունեցած նախաճաշիկի ժամանակ Մեծ Իշխան Պաւէլ Ալէքսանդրօվիչ առաջարկեց աւստրիական էրցհերցօգի կենացը, որի ժամանակ ածեցին աւստրիական օրհներգը: Էրցհէրցօգը առաջարկեց Թագաւոր Կայսրի և հեծելագնդի կենացը, որի ժամանակ հնչեցին ռուսաց օրհներգը: Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրօվիչի հետ գալով Պավլօվսկի գնդի մօտ, էրցհերցօգը նայեց գունդը և որսորդական խումբը, որը մի քանի վարժութիւններ արեց: Զինուորների երեխաների դըպրոցում էրցհէրցօգին դիմաւորեցին աւստրիական օրհներգով: Դպրոցից դուրս գալիս, գունդը փողոցում կարգով կանգնեց. նուագախումբը հնչեց աւստրիական օրհներգը. գունդը պատւի նշան արեց՝ ճանապարհ գցելով էրցհէրցօգին:

ՄԱԴՐԻԴ, 29 յունվարի: Թագաժառանգ Ցեսարևիչ երէկվայ օրը անցկացրեց Տանջօրում և Տրիխինօպօլում. այսօր առաւօտեան Նորին Բարձրութիւնը այցելեց Տրիխինիպօլի մօտ գտնվող Ֆիրանգանի տաճարը, իսկ երեկոյեան գնաց Մանդուրա:

ԱՄՍՏԵՐԴԱՄ, 29 յունվարի: Պաշտօնական դիսկօնտը $3^1/_2$-ից իջեցրած է մինչև 3 %:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 յունվարի: Երէկ էրցհէրցօգը այցելեց հեծելազօր օֆիցէրների դպրոցը. Էրմիտաժում ընդունեց դիպլօմատիական խումբը և երեկոյեան ճաշեց Մեծ Իշխան Սէրգի Ալէքսանդրօվիչի մօտ:—«С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է այն լուրը, որ Սիբիրի երկաթուղու հարցը հետևեալ կերպով վճռվեց. ներկայումս արդէն շինվում է ճանապարհ Զլատօուստից մինչև Չէլիաբինսկ: Այդպիսով ամբողջ Սիբերեան երկաթուղային ճանապարհը կաւարտվի 1894 թւին. այդ ճանապարհը կը կառուցանվի գանձարանի հաշւով. գումարը 350 միլիօն է հաշւած: Ուրալեան ճանապարհը կը միացնվի նոյնպէս մի ճիւղով ընդհանուր ցանցին Կուշվ կայարանից մինչև Չէլիաբինսկ:

ՍՏՕԿՀՕԼՄ, 30 յունվարի: Սօֆիա Կօվալեվսկայա, այստեղի համալսարանի կին-պրօֆէսօրը այսօր վախճանվեց:

## Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 29-ին

| | | |
|---|---|---|
| Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . . | 85 ր. | 30 կ. |
| Բերլինի վրա 100 մարկ — . . | 41 » | 85 » |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . | 33 » | 80 » |
| Ոսկի — — արժէ . . | 6 » | 88 » |
| Մաքսային կուպօններ — . . | 137 » | 50 » |
| Արծաթ — — — . . | 1 » | 08 » |
| Բօրսային դիսկօնտներ — . . | $4^1/_8$ և $5^1/_2$ | » |
| Պետ. բանկի 5 % տոմս — . . | 104 » | 25 » |
| — — — — 2-րդ — | 103 » | 75 » |
| — — — — 3-րդ — | 103 » | 37 » |
| — — — — 4-րդ — | 103 » | 37 » |
| — — — — 5-րդ — | 103 » | 37 » |
| — — — — 6-րդ — | 103 » | 37 » |
| 6 % ոսկեայ ռէնտա . . . . . . . . . | 145 » | — » |
| 4 % ոսկեայ փոխառութիւն . . . . | — » | — » |
| Արևելեան 5 % փոխառ. 1-ին շրջ. | 103 » | 50 » |
| — — — — 2-րդ — | 103 » | 50 » |
| — — — — 3-րդ — | 103 » | 75 » |
| Ներքին 5 % առաջին փոխառութ. | 237 » | — » |
| — — երկրորդ — | 226 » | 25 » |
| Պետական. երկաթուղային ռէնտա . | 104 » | 87 » |
| $5^1/_2$ % ռէնտա . . . . . . . . . . . . . | 107 » | 50 » |
| 4 % ներքին փոխառութիւն . . . . | 95 » | 50 » |
| 5 % դրաւ. թղթ. ազն. կալ. բանկի | 104 » | — » |
| $5^1/_2$ % վկայակ. գիւղ. հող. բանկի. | 108 » | 12 » |
| $4^1/_2$ % գրաւական թղթեր կալուած. | | |
| փոխ. կրեդիտ. ընկեր. Մետալ. . | 139 » | 50 » |
| — — — Թղթադ. | 102 » | — » |
| Պետերբուրգի քաղաքային կրեդիտ . | | |
| ընկերութեան օբլիգացիաները. . | 101 » | 12 » |
| Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ. | 99 » | 87 » |
| Օդեսայի — — . | 101 » | 12 » |
| Թիֆլիսի — — . | — » | — » |
| Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. | — » | — » |
| — — Քութայիսի — — . | — » | — » |

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՄԻ ՏԻԿԻՆ** կամենում է պատուաւոր հայ ընտանիքներում ստանձնել ԲՕՆՆԱՅԻ, կամ տան ԿԱՌԱՎԱՐՉՈՒՀՈՒ պաշտօն: Գիտէ լաւ հայերէն: Ցանկացողները կարող են իրանց հասցէն թողնել „Մշակի" խմբագրատանը: 4—5

## ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 31-ին, հայոց դերասանական խումբը, մասնակցութեամբ տիկին Ջմշկեանի և պ. Պետրոսեանի կը տայ:

I

ՎԱՐԺՈՒՀԻ

կօմեդիա 3 արարուածով, հեղ. Գ. Ջմշկեանի և

II

ՉԱՐՈՒՉԸ ԴԻՊԱՒ ՋՆԴԱՆԻՆ:

Տեղերի գինը սովորական է: Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ թատրոնի կասսայում: Սկիզբն է 8 ժամին: 2—2

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ
Ույժի հասցնելը տարածութեան վրա.
ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.
Էլէկտրական նշաններ.
ԶԱՆԳԱԿՆԵՐ
ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.
Էլէկտրօլիզ,
Ակօմուլատօրներ, Էլէմենտներ,
ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.
Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

## ԷԼԷԿՏՐՕՆ

ԳԼԷԲՕՎ եղբայրների
ՌՕՍՏՕՎ (Դօնի վրա)
Մեծ Սադօվայա փողոց, 24
РОСТОВЪ (на Дону)
БР. ГЛѢБОБЫ
Большая Садовая, 24.

ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ
Օտտօ սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծվում:
Գազի համար — ածուխից,
— — — նաւթից,
— — — անտրացիտից,
— — — կերօսինից
$\frac{1}{2}$-ից մինչև 120 ձիու ույժ:
Շոգեմեքենաներ մեծ արագութեան.
4—100 (ե. շ.)



## Մ. Գ. ՑԷՑԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

### ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պօգպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԵՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ: Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար: Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր: Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետաղական թելեր:

Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժշկների պատուէրով:

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապակիների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:



50—50 (հ)

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈԴՕԼՍԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

**ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ.**
ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ դեղագործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ագմուրօվի դեղատներում:

ЗУБНЫЯ КАПЛИ: кор. 50 к.
ЗУБНОЙ ПОРОШОКЪ: кор. 30 к.
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ: фл. 80 к.
А. ШТЕХЕРЪ

45—52 (հ.)

ԾԱԽՎՈՒՄ Է „ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ"

## ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ

Յիսնամեայ գիտնական և մանկավարժական գործունէութեան
ՅՈԲԵԼԻՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Հանդերձ նրա պատկերով.—խմբագրութեամբ Գր. Խալաթեանի, գինն է 1 ր. (ճանապարհածախս 20 կոպէկ).
Անմիջապէս խմբագրողից ստացողները վճարում են 1 ր.
Հասցէն՝ Լազարեան ճեմարան.—Մոսկվա:

3—3


ВѢРНАЯ СМЕРТЬ.

## „ՄԻՇՈՒՆԱՅ"

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՌԻՍ ԳՈՒՍՏԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքւում, Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ: 19—50 (հ)

„ԱՐԱՔՍ" ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ՆԵՐԿԱՅ ՏԱՐՈՒԱՅ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է Ի ՄԻՋԻ ԱՅԼՈՑ ԱՅՍ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ.

Հայկական խնդրի առթիւ, Ազգային-եկեղեցական խորհրդածութիւններ, Տեղագրութիւն Մշոյ գաւառի, Տաճկահայաստանի տնտեսական վիճակը, Ստեփաննոս եպիսկոպոս Նիկոմիդիոյ, Ջունդ, Դրուագ թատրօնական կեանքէ. Բանաստեղծութիւններ. Նորա ալբօմում, Մուրացկան, Մատաղ երգիչը և կեանքը—Բուզզէ հայագէտի հրատարակութեան առիթով. Մովսէս Խորենացու պատմութեան մասին, Հասունեան և հակահասունեան հայերի միութեան պայմանագիրը, Ներսէս, պատրիարքի հաշտարար ատենախօսութիւնը, վերջին դէպքերի մասին. Լրագրաց շուրջը, Մկրտիչ Սանասարեանց. Աղեքսանդր Մելիք-Հայկազեանց, «Մեր ժամանակի հերոսը». Արձագանք Մշոյ աշխարհէն:

ՆԿԱՐՆԵՐ. Էջմիածին. Արարատեան դաշտ. Մշեցի հայեր. Քուրդերի խումբ. Ստեփաննոս եպիսկոպոս, Ջունդ, Գիւլլիգար. Սանասարեանց, Ղարասաչայ, Ալգէտեան կիրճ:

ՆԿԱՐՆԵՐ Գեղարուեստական բաժնում.

Անտառ աշնան ժամանակ. Բախչիսարայի տեսարանը, Կովկասեան տեսարան, Սուխում-ղալէի տեսարանը, Ժամադրութիւն. Ամառ. Սիրոյ Աստուածը Պսիխէի դռանը, Շիկահեր գլուխ, Երեխաներ. Գիշանկար. Անտառային հովուերգութիւն:

Այս և շքեղ պատկերներով հրատարակելի երկրորդ գրքի բաժանորդագինն է կանխիկ 3 ռուբլի:

Դիմելու է. Петербургъ, Симеону Гуламирянцу. 138. «Արաքսի» խմբագրութեան մէջ ընդունվում են կոմիսիով վաճառելու համար զանազան գրքեր. Իւրաքանչիւր գրքից ուղարկելու է հինգական օրինակ: «Արաքսի» խմբագրութեան մէջ վաճառվում են հայերի մասին ռուսերէն լեզուով զանազան հին և նոր հրատարակութիւններ: Պատուէրները կատարվում են կանխիկ:

2—2

Միայն ֆաբրիկային այդ մարկա կրելով, վաւեր է համարվում.

Huste-Nicht
Gerichtl. geschützt

## ՄԻ՛ ՀԱԶԻՐ

Մեղրից և խոտերից պատրաստված մալց-էկստրակտ և կօնֆէտներ

Լ. Գ. ՊԵՏՇ ԵՒ ԸՆԿ. ԲՐԷՍԼԱՈՒԻ ՄԷՋ:

Քիմիական վերլուծութեամբ և բժշկական փորձերով ապացուցված է, որ այդ պրեպարատները չեն պարունակում առողջութեան համար որ և է վնասակար բաղադրութիւններ, և այդ պատճառով նրանց ներմուծումը Ռուսաստան և նրանց այդտեղ ծախելը թոյլատրված է:

ԳԻՆԸ. շիշը 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. կօնֆէտները 30—50 կոպ.:

Գլխաւոր պահեստ Ռուսաստանում **Վ. ԱՈՒՐԻԽԻ** մօտ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Կօլօկօլնայա $^{18}/_{19}$

Վաճառվում է Ռուսաստանի բոլոր դեղագործարաններում և դեղատներում:

8—16 (ամսի 1 և 15)

Լոյս տեսաւ
ժողովրդական ընթերցանութեան համար
**ԼԱԼՕ**
Վ. Փափազեանի.
Գինը 5 կոպէկ.

Լոյս տեսաւ
և վաճառվում է Թիֆլիսի գրավաճառանոցներում
**ՄՏՔԻ ՄՇԱԿԸ**
Խ. Մալումեանի
Գինը 50 կոպ.

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւ) սիֆիլիսի և աչքացաւի
ԲՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—$11\frac{1}{2}$—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՄՈՒԽԱՐԻՆՍԿԱՅԱ—12—$12\frac{1}{2}$ ժ., կանանց և ներքին ց.
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի և քթի ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—$12\frac{1}{2}$—1 ժ. ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ
ԳԱԴՕՄՍԿԻ—5—$6\frac{1}{2}$ ժ. կաշուի ցաւերի, սիֆիլիսի և վիրաբուժութեան.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօթերապիա):
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6—7 ժ.
Վճար—50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) համար առանձին:
Հերթակալ բժիշկ—երեկ. ժ. 9-ից մինչև առ. ժ. 7-ը:
Հիւանդանոցի վերատեսուչ բժշկապետ Նաւասարդեան

СЪ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА
ПРИВИЛЕГИРОВ.
ЛИЧНАЯ ПОМАДА · PASTA EUGENIE
ПОМАДЫ.
Bertha Ries

Գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բաքւում Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ:

18—50 (շ.)



ՄԻՋՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ
բժշկական դեպարտամենտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագործական Ապրանքների Վաճառման կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում:

40—52 (շ.)

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ
Վանքի Մեծ փողոցի և Մուխրանսկի փողոցի անկիւն, տուն Ջանշիեվի: 5—5

Дозволено цензурою, Тифлисъ 30 Января 1891 г.
Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.